ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԻՄՆԱ ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
10	ՌԻՄՆԱ	ՌԻՄՆԱ	վերնաշապիկ կ/թև	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Վերնաշապիկ՝ կարճաթև, դեղնականաչավուն գույնի ԳՕՍՏ 19867-93։ Արտիկուլ-82039 կամ համանման կտորից, 1մ2 քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր։ Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից։ Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով։ Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ

					լայնության ուղղահայաց շերտաձող։ Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից կտորի գույնի։ Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված։ Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով։ Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ։ Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ։ Գրպանների կափույրների կոճակները 14 մմ՝ մնացածը 11մմ երկու անցքով։ Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների։ Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի։ Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ։ Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը։

					Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ։ Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը։ Պատվիրատու պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն :

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

РИМНА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
10					